

## ՄԱՏԵՆԱԴՐՈՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

## ԿՐԱԿԸ

Մ. ԻՆՆԱՆ. Պէյրուս. 1938. գին 10 ժր.

Մ. Իննան մեր նորագոյն գրողներէն է. համակրելի բանաստեղծ մը՝ գէթ ընթացիկ հասկացողութեամբ, իր երկու բանաստեղծական հատորները ճշմաներու երգեր և Վերակըս, փրկիկ կը զարմեն զինքը, Համաստ են իր տեղիները, հանելի ու ներգայնակ իր սողերը, որոնք զբախտաբար սակայն մտածումներու հրաշքին, և զգացումներու խորքին վրայ չեն բացուիր, երազներ, յուշեր, և որտէ՛ք փրթած կարտներ կը չինեն յառակը իր քերթուածներուն, որոնք թէ՛ն մեզ չեն ձանձրացներ, չեն ալ տպաւորեց և յուզեր:

Ինչ որ նկատելի է Մ. Իննանի, և մեր նորագոյն գրողներու մեծագոյն մասին ըստ, միտքինակ և մակերեսային ըլլալու իրենց թերութիւնն է: Մեր օրերու մտածումն ու զգայնութիւնները արտայայտող գոյն և գիծ անշխարհիկ ըլլալու չափ տարտամ է անոնցմէ ոմանց ըստ, Անտէք կարծես եփեսոսի քնացողներուն պէս տարիներով ննջելի վերջ արթնցած են. այս տեսակէտէն պէտք է ըսել թէ անոնք շօշափելի նպաստ մը չեն բերեր մեր գրականութեան եւ մեր հաւաքական զգայնութեան:

Մ. Իննանի Վերակըս հատորին զիստաւ առանցքը սէրն է. բայց այդ զգացումը իր մէջ ռոմանտիկան ախորժակներու եւ փափաքներու տարողութիւնէն աւելի չէ. փրային ժամադրութիւններու առթիւ ըսուելիք սիրուն սողեր են աւելի, քան հոգեկան ասպնապներու արձագանքն ու անդրադարձն: Անհրաժեշտ է միտքովակ կեանքի մակերեսէն վեր բարձրանալ, մեզի բերելու են-թաղայական և առարկայական մտածումի և ըզգացումի աշխարհներէն նոր ի նորոյ պեղուած սակի կտորներ և ստեղծողականի փլուզեցներ, այլապէս իր և իրեն նմաններուն աշխատանքը ոսկեղէնով որոնելու յամառ ճիգ մը պիտի ըլլայ, խաբուած արգոնաւորներու նման:

Աւելի համակրելի են Մ. Իննանի ճշմաները երգը հատորին քերթուածները, որոնց մէջ ըզգացումի և կարօտի կայներ ակներև են. սակայն հոս ևս անարգար եղած չինք ըլլաք, եթէ ըսենք թէ՛ տուններու և քնութեան այս նկարներ ջինջ ունի շքեղ և անսովոր. սակայն հակառակ ասոր, ինչպէս ըսի, համակրանքով կը կարգադրեն, և եթէ նոր զգայնութիւններ չեն ծնիր մեր մէջ, կրթ ձանձրացնելու առաքելութիւն ունին, եւ ասիկա շատ բան կ'արեւ: Բանաստեղծին պարտականութիւնն է, չլռելու համար կոչուլը, մեզի տալու անսովորը, անտիպը, մեր մտածումները ու զգացումները թարմացնել տարաշխարհիկ տեսերով և բոյբերով, մեր մտածումին մէջ բանա-

լու լուսաւոր հեռուներ, մեր շուրջի միտքնահոգեկան մէջ ստեղծելու բուստէ կղզեակներ: Այս տեսակէտէն Մ. Իննան տակաւին բուսական տեղ ունի իր արուեստ ուխտագնացութեան համբուն մէջ. իրեն յաջողութիւն կը մարդենք:

## ՄՐՏԵՐՈՒ ԵՐԳԸ

ԱՐՄԷՆ ԱՆՈՅԷ. Պէյրուս. 1938. գին 5 ժր.

Ուրիշ մը մեր նորագոյն գրողներէն, նոյն դպրոցէն, նոյն սեռի գրող և առաջին չփռմով նոյն քան համակրելի: Չեմ ուզեր կրկնել Մ. Իննանի հատորին առթիւ ըսուածները. այս ևս ունի սահուն և յղեղուած տողեր, և երաժշտականութիւն մը՝ որ խորունկ չի ննջեր սակայն: Արմէն Անոյշ Վրտերուս աշխարհէն, և կարօտներու աշխարհէն, որոնք մեզի անսովոր չեն սակայն՝ հակառակ անոնց ենթակայական հանգամանքին:

Իր զգացումները վայելչութիւն մը ունի միայն, և ուրիշ ոչինչ: Ուրիշներու կարգին միանուազ կը յանգրգէ իր սէրերու պատմութիւնը. Կ'ընդգծեմ այս որակումը, վստիկ Արմէն Անոյշի քերթուածները պատմող նկարագիր մ'ունին: Կուտայ աւելի իր զգացումներու առարկայական և արտաքին վիճակներու նկարագրին ու պատմութիւնը, քան անոնց վերստին զգացումած եւ կուտացումած ենթակայական իրողութիւնը:

Բանաստեղծօրէն անկատար զգացումած եւ մակարերուած այդ յղացքը, շատ բան կը զեղչէ իր արժէքէն:

Յետոյ ծոյլ է իր մտածումը, և հեռաւոր կառելիութիւններու չի ձգտիր, Դուրին և մաշած տողերով կը բուսականանայ իր գիտակցութեան սահմանին մէջ միայն բռնուած մտածումներն ու զգացումները տարապիւրտ համար. այս պարագայէ՛ չընելու համար աղէտը՝ պատճառ կ'ըլլայ որ ստեղծուի այն մակերեսային և ձանձրով պարտադրող բանաստեղծութիւնը՝ որուն շոտաբանն է Հայրենիքը Ամառգիրը: Եթէ քնութեան, մարդց և կնիկ նկատմամբ մեր կեցուածքը և զանոնց արտայայտող արուեստին կշիռն ու որակը չեն սովորականէ վեր ու տարբեր, քստեր զանոնք հրազելի, հատորներու վերածուած գոյնզգոյն խորագրերով:

Իր տողերը մեզ անսովորին, գեղեցիկին չեն տանիք, ոչ ալ կը բանան մեզի խորունկ տրամաներու մարագորներ:

Արեւստաւորի բաժինը անթերի է Արմէն Անոյշի գործին մէջ, իսկ արուեստագիտին վերաւոր, բուսական համար այդ վէրքը, Արմէն Անոյշ անհրաժեշտ է որ արուեստագիտի մտահոգութիւններով կառուցանէ իր քերթուածները, և զանոնք յօրինէ խորհուրդով, արեւնով, և սիրով:

17 Մեղք. 1938, Նրաւաղիմ

Ծ. Վ. Յ.